21.06. Ստուգված է

**2022-2023 ուստարվա ընթացքում 1-ին << ա >>դասարանի**

**դասվարի կատարած ուսումնաուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան հաշվետվություն /Դասվար՝ Լ. Խուբլարյան/**

2022 -2023 ուսումնական տարվա սկզբում 1-ին << ա >>դասարանում սովորում էին 34 աշ., տարվա վերջում՝ 33 , որից 15-ը աղջիկ են, իսկ 13-ը `տղա: Մտավոր հետամնաց երեխաներ չկան: Բոլորը աշակերտները դարձան գրաճանաչ:Կարողանում են կարդալ և գրել: Աշակերտները կարողանում են հաշվել, գրառել բնական թվերը, համեմատել, կատարել գործողություններ : Ողջ ուստարվա ընթացքում անցկացված և իրականացված աշխատանքների նպատակն է եղել դաստիարակել հասարակությանը և ընտանիքին պիտանի անձնավորություն:

Տարվա կտրվածքով նախատեսված բոլոր միջոցառումներն ու տեսադասերը, բաց դասը իրականացվել : Տարվա ընթացքում դիտել են միջոցառումներ, ներկայացումներ:

Մասնակցել են համադպրոցական ցուցահանդեսին՝ նվիրված Ամանորին, ինչպես նաև

<< Ամանորյա դուռ>>մրցույթին, որի արդյունքում զբաղեցրել ենք 2-րդ տեղը, արժանանալով մրցանակի:

1.Ուսումնադաստիարակչական աշխատանքներ են անցկացվել բոլոր դաստիարակչական ժամերին:

2.Հայեցի և հոգևոր դաստիարակության նպատակով մասնակցել են<<Սուրբ Զատիկ>>տոնին նվիրված համադպրոցական ցուցահանդեսին, դիտել են միջոցառում:

3.Գեղագիտական դաստիարակության նպատակով կազմակերպվել են զրույցներ անվանի նկարիչների և երգահանների մասին :

4. Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով անց են կացվել զրույցներ<< Հայ զինվորը մեր պաշտպանն է>>, <<Ճանաչենք մեր հայրենիքը>> և այլ թեմաներով:

5.. Բնապահպանական դաստիարակության նպատակով անց են կացվել ցրույցներ << Օգնություն թռչուններին>>, << Մաքուր պահենք մեր շրջապատը>> և այլ թեմաներով:

7. Անց են կացվելծնողական ժողովներ, որի ժամանակ քննարկվել են առաջադիմությանը, վարքին, աշակերտների բացակայությանը վերաբերող և այլ կազմակերպչական հարցեր:

8. Այբբենարանի շնորհանդեսին մասնակցել են բոլոր աշակերտները, որն անց ենք կացրել Օշականում:

9. Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպված միջոցառմանը նույնպես մեծ ոգևորությամբ են մասնակցել:

10.Դասարանում աստիճանաբար ձևավորվել է համախմբված կոլեկտիվ :

11. Անց են կացվել 4 ծնողական ժողովներ, որի ժամանակ քննարկվել են առաջադիմությանը, վարքին, աշակերտների բացակայությանը վերաբերող և այլ կազմակերպչական հարց